ՀՏԴ 711.01 (479.25)

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԵՐԿՐԻ ՓՈՐՁԸ

Ս.Ա. Թովմասյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *տարածական պլանավորում, պլանավորման մակարդակ, գլխավոր հատակագիծ, տարածքների գոտիավորում:*

Ներկայացված են տարածական պլանավորման ոլորտի փորձը և տարածքային զարգացման հիմնախնդիրների կարգավորման մեխանիզմներն արտերկրում: Համեմատական վերլուծության են ենթարկվել պլանավորման տարբեր մակարդակներում կիրառվող փաստաթղթերի տեսակները, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները Հայաստանի հանրապետությունում կիրարկվող տարածական պլանավորման համակարգի հետ: Վերլուծության արդյունքում ներկայացվել են առաջարկություններ Հայաստանի Հանրապետության տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի համակարգի արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Տարածքային զարգացման անհամամասնություններն ու տարածական պլանավորման ոլորտի հիմնախնդիրներն այս կամ այն չափով առկա են ոչ միայն Հայաստանի Հանրապետության հետ նախկինում նույն աշխարհաքաղաքական ու տնտեսական միջավայրում գտնվող երկրներում, այլ նույնիսկ ամենաբարեկեցիկ կենսամակարդակ ու զարգացած տնտեսություն ունեցող պետություններում: Չմանրամասնելով տարածական պլանավորման ոլորտում տարբեր երկրներում կիրառվող համակարգերին բնորոշ առանձնահատկությունները, սույն հետազոտության շրջանակներում, արտերկրի փորձն ուսումնասիրելու առումով երկրների ընտրությունը կատարվել է հետևյալ սկզբունքով.

ա) Հայաստանի Հանրապետության հետ նույն աշխարհաքաղաքական միջավայրի և պատմականորեն ձևավորված տարածական պլանավորման համակարգի ժառանգորդը լինելու առումով ընտրվել է Ռուսաստանի Դաշնությունը, ինչը հնարավորություն կընձեռի համեմատել պլանային տնտեսությունից դեպի ազատական հարաբերություններ անցման ընթացքում ձեռնարկված քայլերը և դրանց արդյունավետությունը,

բ) զարգացման բարձր մակարդակ և տարածական պլանավորման կայացած ու գործուն համակարգ ունեցող եվրոպական երկրներից ընտրվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (շուկայական համակարգ, որտեղ պետությունը շոշափելի կարգավորիչ գործոն է), ինչը թույլ կտա գնահատել Հայաստանում իրականացվող համակարգային բարեփոխումների շրջանակը,

գ) ամբողջապես շուկայական հարաբերություններին ապավինող համակարգում տարածքային զարգացման ու տարածական պլանավորման հիմնախնդիրների լուծման մեթոդների և դրանց գնահատման առումով առավել արդյունավետ կարող լինել Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձի ուսումնասիրությունը:

Իհարկե, զուտ մեթոդաբանական տեսանկյունից անիմաստ և ապարդյուն կարող է լինել արտերկրում կիրառվող որևէ համակարգի ամբողջական ներդնումը Հայաստանի Հանրապետությունում: Խնդիրը վերաբերում է տարածական պլանավորմանն առնչվող այնպիսի գործիքակազմի ընտրությանը, որը, լինելով արդյունավետ, արդիական ու հեռանկարային, միաժամանակ առավելագույնս պայմանավորված կլինի մեր երկրի առանձնահատկություններով:

Տարածական պլանավորումը Ռուսաստանի Դաշնությունում

ՌԴ Քաղաքաշինական Օրենսգրքով [1] սահմանված՝ նախագծային փաստաթղթերի դասակարգման սկզբունքները որոշակիորեն տարբերվում են մեր երկրում սահմանված սկզբունքներից: Եթե Հայաստանում քաղաքաշինական փաստաթղթերը բաժանված են երկու խմբի՝ ծրագրային (կամ տարածական պլանավորման) և ճարտարապետաշինարարական, Ռուսաստանում սահմանվել է դրանց հետևյալ կառուցվածքը.

ա. տարածքային պլանավորման փաստաթղթեր, որոնց կազմի մեջ մտնում են Դաշնության, դրա տարածքային կազմավորումների (Դաշնության սուբյեկտների) և մունիցիպալ կազմավորումների համար մշակված փաստաթղթերը:

Որպես ***Դաշնության մակարդակի*** փաստաթղթեր են սահմանված (հոդված 10) տարածքային պլանավորման սխեմաները հետևյալ ոլորտների համար.

- դաշնային տրանսպորտ (երկաթուղային, օդային, ծովային, ներքին ջրային, խողովակաշարային), դաշնային նշանակության ավտոմայրուղիներ,
- երկրի պաշտպանություն և պետության անվտանգություն,
- էներգետիկա,
- բարձրագույն կրթություն,
- առողջապահություն:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն, ***Դաշնության սուբյեկտների մակարդակի*** տարածքային պլանավորման սխեմաներով, վերը թվարկված ոլորտներից զատ, կարգավորվում են նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտներին առնչվող խնդիրները, ինչպես նաև տարածքայինև մունիցիպալ բնույթի արտակարգ իրավիճակների, տարերային աղետների, համաճարակների կանխարգելումը և դրանց հետևանքների վերացումը:

Փաստաթղթերի անվանումից ակնհայտ է, որ օրենսգրքում տարածական պլանավորումը դիտարկված է սոսկ որպես ճյուղային կամ ոլորտային, *արդեն իսկ մշակված և հաստատված ծրագրերի* գրաֆիկական արտացոլանք, և այդ դրույթն ուղղակիորեն արտացոլված է Օրենսգրքի 9-րդ հոդվածում (կետ 5), համաձայն որի տարածքային պլանավորման փաստաթղթերը մշակվում են տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ռազմավարական ուղղությունների և ծրագրերի հիման վրա:

18-րդ հոդվածով ***մունիցիպալ կազմավորումների (տեղային մակարդակի)*** տարածքային պլանավորման փաստաթղթեր են սահմանված՝

- մունիցիպալ շրջանների տարածքային պլանավորման սխեմաները,
- բնակավայրերի գլխավոր հատակագծերը,
- քաղաքային շրջանների (օկրուգների) գլխավոր հատակագծերը:

բ. Օրենսգրքում առանձին գլխով սահմանված են քաղաքաշինական գոտիավորմանը ներկայացվող պահանջները, այդ թվում՝ հողօգտագործման և կառուցապատման կանոններին, դրանց մշակման և հաստատման կարգերին, տարածքային գոտիների առանձնացմանն ու տեսակներին, քաղաքաշինական կանոնակարգերին, հողամասերի թույլատրված օգտագործումներին առնչվող դրույթները:

գ. Առանձին գլուխ է նվիրված նաև ***տարածքների հատակագծման փաստաթղթերին:*** Որպես այդպիսիք են սահմանված տարածքների հատակագծման նախագծերը, տարածքների սահմանազատման (межевание территотий) նախագծերը և հողամասերի քաղաքաշինական հատակագծերը:

դ. Օրենսգրքի 6-րդ գլխով սահմանված են նաև ***Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի*** մշակմանն, ինչպես նաև դրան առնչվող տարբեր գործառույթներին ներկայացվող պահանջները:

Դժվար է ներկայումս գնահատական տալ նախագծային փաստաթղթերի հիերարխիայի՝ ընդունված սկզբունքի արդյունավետությանը, քանի որ 2004 թ. ընդունված Օրենսգիրքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2005, 2008, 2011, 2012, 2013 և 2014 թվականներին: Ընդ որում, տարածական պլանավորմանն առնչվող մասերի ամենամեծ փոփոխություններն ու լրացումներն իրականացվել են 2011 թ. և սահմանված նորմերը դեռևս բավարար փորձաշրջան չեն անցել:

Հարկ է նշել նաև, որ առանձնապես տեղական մակարդակների (բնակավայրերի գլխավոր հատակագծեր և գոտիավորման նախագծեր) մշակման փուլում կարևորագույն բաղադրիչ հանդիսացող՝ տարածքների գոտիավորման ընտրված մոդելը որոշակիորեն տարբերվում է թե խորհրդային համակարգում, թե դրա ժառանգորդը հանդիսացող Ռուսաստանի Դաշնության Հողային Օրենսդրությամբ [2] սահմանված

դասակարգման սկզբունքներից:

1-ին աղյուսակում ներկայացված են տարածքների (հողային ֆոնդի) գոտիավորման ու դասակարգման սկզբունքներն՝ ըստ ՌԴ Քաղաքաշինական և Հողային Օրենսգրքերի:

Քաղաքաշինական Օրենսգրքով սահմանված են թվով 9 հիմնական գոտիներ, միաժամանակ, տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված է այլ (լրացուցիչ) գոտիներ սահմանելու իրավասություն (հոդված 35), մինչդեռ հողային օրենսգիրքով սահմանվել են 7 կատեգորիաների հողեր:

Աղյուսակ 1

Տարածքների (հողային ֆոնդի) գոտիավորման և դասակարգման սկզբունքներն՝ ըստ ՌԴ Քաղաքաշինական և Հողային Օրենսգրքերի

ՌԴ Քաղաքաշինական Օրենսգիրք (քաղաքաշինական գոտիավորում)	ՌԴ Հողային Օրենսգիրք Հողային ֆոնդի դասակարգում (կատեգորիաներ)
Գյուղատնտեսական օգտագործման	Գյուղատնտեսական նշանակության
Բնակելի	Բնակավայրերի
Հասարակական-գործարար	
Արտադրական	Արդյունաբերության, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, ռադիոհեռարձակման, հեռուստատեսության, ինֆորմատիկայի, տիեզերական գործունեության ապահովման, պաշտպանության, անվտանգության, այլ հատուկ նշանակության
Ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների	
Ռեկրեացիոն նշանակության	
Հատուկ պահպանվող տարածքների	Հատուկ պահպանվող տարածքների
Հատուկ նշանակության	
Ռազմական օբյեկտների տեղաբաշխման	
	Անտառային ֆոնդի
	Ջրային ֆոնդի
	Պահուստի
Այլ տարածքային գոտիների	

Ինչպես երևում է աղ.-ից, գոտիների լիարժեք նույնականացում առկա է միայն գյուղատնտեսական նշանակության հողերի և հատուկ պահպանվող տարածքների պարագայում: Գոտիների տարանջատման նման մոտեցումը և տարընթերցումները կարող են դժվարություններ ստեղծել ոչ միայն նախագծային փաստաթղթերի մշակման, այլև տարածքների (հողային) հաշվեկշիռների կազմման ժամանակ: Դաշնությունում ներկայումս կարևորվում է տարածաշրջանային և հատկապես տեղական մակարդակներում տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման անհրաժեշտությունը՝ որպես համապետական ռազմավարական ծրագրերի իրականացման գործուն մեխանիզմ:

Տարածական պլանավորումը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում

Տարածական պլանավորման ոլորտում Գերմանիայի կուտակած փորձը կարելի է դիտարկել երկու հարթությունում: Նախկին Արևմտյան Գերմանիայի երկրամասերը կարելի է համարել որպես պատմական զարգացման և իրականացված քայլերի արդյունքում ձևավորված մոդելային համակարգ (թերևս, ամենաամբողջականը և գործունը Եվրոպայում) և դրա առանձին տարրեր կարող են դիտարկվել որպես նպատակակետեր՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների վերջնական արդյունք-

ների տեսակետից: Միաժամանակ, արևելյան երկրամասերում առկա են եղել հետխորհրդային պետություններին բնորոշ հիմնախնդիրներ և ուշադրության են արժանի այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում տարածական պլանավորման խնդիրներն ի սկզբանե կարգավորվել են դեռևս 1960 թ. ընդունված «Շինարարական Օրենսգրքով» (Baugesetzbuch) [3], որի 2-րդ մասը վերնագրված է՝ «Քաղաքաշինական հատուկ Օրենսդրություն»: Այդ մասի առանձին գլուխներ անդրադառնում են բնակավայրերի վերակառուցման ինստիտուցիոնալ և ֆինանսական խնդիրների կանոնակարգմանը, վարչարարությանը, պլանավորման գործընթացների երաշխիքներին և այլն:

Ներկայումս տարածական պլանավորումը կարգավորող հիմնական իրավական ակտը «Տարածական պլանավորման մասին» Դաշնային Օրենքն է (Raumordnungsgesetz, ROG) [4], որի հիման վրա կարգավորվում են ինչպես դաշնային, այնպես էլ երկրամասային մակարդակների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման հիմնադրույթները և համապատասխան իրավահարաբերությունները: Օրենքում ներառված են առանձին դրույթներ տարածական պլանավորման գործընթացների ժամանակ հորիզոնական և ուղղահայաց կապերի արդյունավետ գործառման վերաբերյալ, ինչը պայմանավորված է Գերմանիայում ընդունված՝ ցանկացած ծրագրի հրապարակայնության, թափանցիկության և հանրային մասնակցության ապահովման սկզբունքով:

Գերմանիայում տարածական պլանավորման բնագավառում գործում է հստակ՝ վերընթաց և վարընթաց ստորակարգությունը: Առկա են նաև ոչ-ֆորմալ՝ Եվրոպական տարածական զարգացման հայեցակարգեր, ինչպիսին է, օրինակ՝ «Եվրոպական Միության տարածքային օրակարգ 2020»-ը [5], որում ամփոփված են եվրոպական տարածքային զարգացման ընդհանրական գաղափարները և որոնց հիմքում ընկած՝ տարածական պլանավորման սկզբունքները գործում են նաև Գերմանիայում (նկ. 1): Համապետական և երկրամասային մակարդակներում տարածական պլանավորման առանցքային սկզբունքներն են՝ քաղաքային և գյուղական տարածքների հավասարակշռված զարգացումն ու բազմակենտրոն համակարգի կատարելագործումը:



ա. *բ.*

Նկ. 1. Տարածական պլանավորման առանցքները Եվրոպայում (ա) և Գերմանիայում (բ)

Գերմանիայի տարածական պլանավորման համակարգի ստորակարգության հիմնական սկզբունքներն են.

➢ *հնարավոր ներքին օրակի գերակայության սկզբունք*. որոշումները պետք է ընդունվեն կառավարման ստորին մակարդակներում՝ ըստ համապատասխան իրավասության: Ավելի բարձր մակարդակները միջամտում են միայն այն դեպքում, եթե խնդիրները չեն կարող լուծվել կամ կարգավորվել ստորին մակարդակում:

➢ *տեղական պլանավորման ինքնուրույնության սկզբունք.* տեղական ինքնակառավարման մարմիններն օժտված են ինքնուրույնության բարձր աստիճանով և պատասխանատու են իրենց տարածքում պլանավորման աշխատանքների կենսագործման համար: Դրանք իրավասու են ստանալ տեղեկատվություն, ունենալ մասնակցություն պլանավորման գործառույթներում և անցկացնել պլանավորման ընթացակարգերով նախատեսված հանրային լսումներ:

➢ *հակակշռող ազդեցությունների սկզբունք.* տեղական և ռեգիոնալ պլանավորման գործընթացները փոխադարձ ազդեցություն են գործում միմյանց վրա, ինչպես նաև կրում են պլանավորման այլ մակարդակների ազդեցությունը: Հետևաբար, պլանավորման աշխատանքները կազմակերպելիս յուրաքանչյուր տարածաշրջան պետք է հաշվի առնի անմիջապես վերադաս մակարդակի պլանավորման գործընթացները, որն իր հերթին պետք է նկատի ունենա այն պայմանները և պահանջները, որոնք ուղղակի վերաբերում են առանձին տարածաշրջանին.

➢ *շահերը հավասարակշռելու սկզբունք.* տարածքային և ոլորտային պլանավորման բոլոր մակարդակներում նախագծեր մշակելիս անհրաժեշտ է ապահովել պետական, համայնքային և մասնավոր հատվածների հակադիր շահերի հավասարակշռումը: Սա պլանավորման գործընթացի նկատմամբ ներկայացվող առանցքային պահանջ է:

Վերը շարադրվածից ակնհայտ է, որ Գերմանիայում առանձնապես կարևորվում են ապակենտրոնացման և շահերի հավասարակշռման հետ կապված խնդիրները [6]:

Գերմանիայում կիրարկվող տարածական պլանավորման համակարգի կառուցվածքը [7] ներկայացված է 2-րդ նկարում:



Նկ. 2. Գերմանիայի տարածական պլանավորման համակարգի կառուցվածքը

Ի լրումն շարադրվածի, հարկ է անդրադառնալ Գերմանիայում ընդունված՝ տարածական պլանավորման համակարգի կառուցվածքային մոդելին: Մասնավորապես, Բավարիայում կա տարածական պլանավորման 18 տարածաշրջան (Raumplanungsregionen), որոնք սահմանված են Բավարիայի տարածական պլանավորման օրենսդրությամբ: Չնայած վերջիններիս արտաքին սահմանները համընկնում են երկրամասերի վարչական սահմանների հետ, դրանք չեն հանդիսանում վարչատարածքային միավոր և ծառայում են տարածական պլանավորման արդյունավետ համակարգի ձևավորմանը: Նշված մոտեցումը կարելի է դիտարկել որպես անհամեմատ արդյունավետ, քանի որ տարածական պլանավորմանն առնչվող բազմաթիվ գործոններ չեն ավարտվում որևէ վարչական միավորի սահմաններում: Մասնավորապես, շրջակա միջավայրի պահպանության, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների տեղաբաշխման ու զարգացման, բնական ռեսուրսների օգտագործման, տարածքային կազմակերպման բազմակենտրոն մոդելի կազմավորման խնդիրները չեն կարող իրենց լուծումը ստանալ առանձին վերցված վարչատարածքային միավորի շրջանակներում և ենթադրում են ավելի համալիր մոտեցումներ:

Գերմանիայում համայնքի մակարդակում պլանավորման փաստաթղթերը մշակվում են համայնքի (բնակավայրի) զարգացման հայեցակարգի հիման վրա: Այդ փաստաթղթերը շատ հակիրճ են և ներկայացնում են համայնքի կայուն զարգացման հիմնական ոլորտային գործողությունները և ուղենիշները: Դրանք մշակվում են համայնքի բնակչության մասնակցությամբ և հասանելի ու հասկանալի են սոցիալական բոլոր շերտերի համար:

Ընդհանուր առմամբ, համայնքի մակարդակում գործում են տարածական պլանավորման ոչ ֆորմալ և ֆորմալ մեխանիզմներ:

Հողօգտագործման նախնական հատակագիծը (պլանը) սահմանում է հողօգտագործման տեսակները համայնքի ամբողջ տարածքի համար և պարտադիր է հանրային կառավարման սուբյեկտների համար: Այս նախագիծը բովանդակային առումով սերտ աղերսներ ունի Հայաստանում կիրարկվող՝ համայնքների գլխավոր հատակագծերի հետ: Հողօգտագործման պարտադիր հատակագիծը պարտադիր է ինչպես հանրային կառավարման սուբյեկտների, այնպես էլ մասնավոր սեփականատերերի համար: Այն սահմանում է տարածքի առանձին գոտիներն ու օգտագործման մանրամասները: Ըստ էության, հողօգտագործման պարտադիր պլանը ծառայում է այն խնդիրների լուծմանը, որոնք մեր օրենսդրությամբ վերապահված են գոտիավորման նախագծերին:

Պլանավորման գործիք է նաև բնակավայրերի առանձին հատվածների շինարարական հատակագիծը (պլանը) կամ հողերի վերաբաշխման նախագիծը, որը մշակվում է քաղաքաշինական միջավայրի առողջացման, առանձին ենթակառուցվածքների բարելավման, բնակարանային շինարարության և այլ նպատակներով: Նման նախագծեր պարտադիր կարգով մշակվում են նաև քաղաքաշինական նպատակներով մասնավոր հատվածից հողերի գնման ծրագրերի իրականացման ժամանակ: Շինարարական պլանները բովանդակային առումով համապատասխանում են Հայաստանի Հանրապետությունում կիրառվող կառուցապատման նախագծերին:

Տարածական պլանավորումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Մինչև անցած դարի 60-ական թվականները տարածական պլանավորման խնդիրները Միացյալ Նահանգներում կարգավորվում էին միայն նահանգների և տեղական մարմինների կողմից, ինչը խոչընդոտում էր համապետական մասշտաբով տարածքային զարգացման խնդիրների համակարգմանը: Այդ տարիներին է, որ տարածքային քաղաքականությունը դառնում է դաշնային մարմինների պարտադիր գործառույթ, միաժամանակ (մինչև 1975 թ.) ընդունվում են մի շարք օրենքներ՝ հետևյալ խնդիրների կանոնակարգման նպատակով.

- հետընթաց ապրող տարածաշրջանների աջակցության հիմնական ուղղությունների սահմանում,
- ապալաչյան լեռնային տարածաշրջանի զարգացում,
- պետական, նահանգային ու տեղական իշխանության մարմինների գործողությունների համակարգում՝ տարածքային զարգացման հետ կապված խնդիրներում,

- գյուղատնտեսական ուղղվածության տարածաշրջանների զարգացում,
- քաղաքների զարգացում և բնակարանային քաղաքականություն,
- տարածքային զարգացում [8]:

Այսուհանդերձ, Միացյալ Նահանգներում տարածքային զարգացման քաղաքականության հիմքում ընկած է ոչ թե համալիր կամ ոլորտային տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, այլ առանձին խնդիրների վերաբերյալ օրենսդրական ակտերի ընդունումը, նպատակային ծրագրերի մշակումն ու իրականացումը, քանի որ պետության միջամտությունը տարածական պլանավորման ոլորտում, առավել ևս համապատասխան համալիր նախագծերի մշակումը, մշտապես վիճարկելի թեմա է եղել ԱՄՆ-ում [9]: Թերևս, հենց այդ պատճառով տարածական պլանավորմանն առնչվող և Եվրոպական մայրցամաքում արմատավորված հասկացություններն ու եզրույթները գործնականում կիրառություն չեն գտել Միացյալ Նահանգների ինչպես օրենսդրական ակտերում, այնպես էլ մասնագիտական գրականության մեջ:

Նահանգների մակարդակում ևս տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը լայն տարածում չի գտել և սահմանափակվել է առանձին խնդիրների կարգավորման նպատակով որոշ նահանգների կողմից ընդունված նախագծերով, որոնք կրում են ուղեցուցային բնույթ (բացառությամբ մի քանի նահանգների, որտեղ դրանցում սահմանված նորմերը պարտադիր կարգով պետք է հաշվի առնվեն տեղական մակարդակում՝ գոտիավորման փաստաթղթերի մշակման ժամանակ): Դրանից զատ, կիրառվում է նաև առանձին ծրագրերի իրականացման նպատակային հիմնադրամների ստեղծման սկզբունքը, ինչպես նաև տարբեր ծրագրերի վարկանիշային գնահատման համակարգը (Program rating assessment tool) [10], ինչը ներառում է ծրագրի կառուցվածքի, նպատակի և խնդիրների, հիմնավորումների, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների և վերջնաարդյունքների բաղադրիչները: Այսուհանդերձ, սկսած 1990-ական թվականներից, մասնագիտական շրջանակներում և կառավարման մակարդակներում արմատավորվում է տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման անհրաժեշտության գաղափարը՝ հատկապես առանձին տարածաշրջաններում բնակչության գերկենտրոնացվածության կանխարգելման, շրջակա միջավայրի պահպանության և տրանսպորտային կապերին առնչվող խնդիրների կանոնակարգման նպատակով:

Ի տարբերություն համապետական կամ նահանգային մակարդակների, որտեղ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման միասնական մոդելներ չեն կիրառվում, ԱՄՆ-ում համընդհանուր տարածում են գտել համայնքների մակարդակում մշակվող գոտիավորման նախագծերը: Դրանք Միացյալ նահանգներում առաջին անգամ կիրառվել են 1909 թ.՝ Լոս-Անջելեսում: 1924 թ. նահանգների և տեղական համայնքների համար նախապատրաստվել և հաստատվել են քաղաքային հողօգտագործման կարգավորման ստանդարտները, որոնց հիման վրա պետք է մշակվեն և կիրառվեն գոտիավորման նախագծերը: Այդ փաստաթղթերը ներկայումս գործում են գրեթե բոլոր քաղաքներում:

Գոտիավորման նախագծերը, չնայած նահանգներում կիրառվող մոդելների որոշ տարբերություններին, ըստ էության հանդիսանում են տեղական մակարդակում հողօգտագործումն ու քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող հիմնական նորմատիվային փաստաթուղթ և մշակվում են համայնքի բնակիչների անմիջական ու շահագրգիռ մասնակցությամբ: Գոտիավորման փաստաթղթերը սովորաբար մշակվում են մեկ ամբողջական փաստաթղթի տեսքով՝ համայնքի բոլոր հողերի ընդգրկումով և պարունակում են դրանց թույլատրելի օգտագործումները, կառուցապատման բոլոր չափորոշիչները և կանոնները:

Հայաստանի Հանրապետությունում և վերը թվարկված երկրներում տարածական պլանավորման տարբեր մակարդակներում կիրարկվող գործիքների համեմատական ամփոփ պատկերը ներկայացված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Տարածական պլանավորման փաստաթղթերի համակարգն ըստ պլանավորման մակարդակների

Պլանավորման մակարդակ	Հայաստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն	Գերմանիայի Դաշնություն	ԱՄՆ
Անդրսահմանային մակարդակ	Բացակայում է	Բացակայում է	Եվրոպայի տարածական զարգացման հայեցակարգ	Բացակայում է
Համապետական մակարդակ	ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ (համալիր պլանավորման փաստաթուղթ), ինչպես նաև ըստ անհրաժեշտության մշակվող (ոլորտային) նախագծեր	Տարածքային պլանավորման ոլորտային սխեմաներ	Տարածական պլանավորման հայեցակարգեր, համալիր և ոլորտային նախագծեր	Կարգավորվում է օրենսդրական ակտերով և առանձին ոլորտային ծրագրերով
Տարածքային (երկրամասային) մակարդակ	Մարզերի տարածքային հատակագծման նախագծեր և ըստ անհրաժեշտության մշակվող (ոլորտային) նախագծեր	Տարածքային պլանավորման ոլորտային սխեմաներ	Տարածական պլանավորման հայեցակարգեր, համալիր և ոլորտային նախագծեր	Կարգավորվում է օրենսդրական ակտերով և առանձին ոլորտային ծրագրերով
Ռեգիոնալ (տարածաշրջ.) մակարդակ	Տարածքային հատակագծման նախագծեր համայնքների խմբերի համար (միկրոռեգիոնալ մակարդակ)	Սահմանված չեն	Տարածական պլանավորման հայեցակարգեր, համալիր և ոլորտային նախագծեր	Ոչ միշտ մշակվող՝ ուղեցույցային բնույթի ոլորտային նախագծեր
Տեղական (համայնքային) մակարդակ	• Համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծ, • գոտիավորման նախագիծ	• Մունիցիպալ շրջանի տարածքային պլանավորման սխեմա, • բնակավայրի գլխավոր հատակագիծ, • քաղաքային շրջանների (օկրուգների) գլխավոր հատակագծեր, • քաղաքաշինական գոտիավորման նախագծեր, • տարածքների հատակագծման և սահմանազատման նախագծեր	• Համայնքի զարգացման հայեցակարգ • ենթատարածքային զարգացման պլան, • հողօգտագործման նախնական հատակագիծ (պլան), • իրավաբանորեն պարտադիր հողօգտագործման հատակագիծ	Գոտիավորման նախագծեր (zoning)

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում կիրարկվող տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի) համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով

ցանկալի է հիմնվել արտերկրում փորձարկված և պատշաճ արդյունքներ արձանագրած մի շարք սկզբունքային դրույթների վրա, մասնավորապես՝

ա) սահմանել պլանավորման տարբեր մակարդակների փաստաթղթերի փոխադարձ առնչություններն ու ազդեցությունների շրջանակը՝ հատկապես պլանավորման «ներքին օղակներից դեպի վերին օղակներ» տիրույթում,

բ) ձևավորել պլանավորման գործառույթներում պետության, համայնքների, տնտեսության մասնավոր հատվածի և քաղաքացիական հանրության շահերի հավասարակշռման մեխանիզմներ,

գ) հաշվի առնելով բնական-աշխարհագրական, տնտեսական և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների գործոնները, կազմավորել տարածական պլանավորման տարածաշրջաններ՝ անկախ վարչատարածքային կառուցվածքից և սահմաններից,

դ) ընդունել համապատասխան տարածաշրջանների տարածքային զարգացման հայեցակարգեր՝ մինչև տարածական պլանավորման փաստաթղթերի մշակմանն անցնելը,

ե) ամբողջացնել գոտիավորման նախագծերին առնչվող նորմատիվ-իրավական հենքը՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկություններն ու ձևավորված ավանդույթները:

ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ ТЕРРИТОРИАЛЬНОГО ПЛАНИРОВАНИЯ

С.А.Товмасян
Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: *территориальное планирование, уровень планирования, генеральный план, зонирование территорий.*

Представлены опыт территориального планирования и механизмы решения проблем территориалного развития в зарубежных странах. Осуществлен сравнительный анализ видов документов, применяемых на различных уровнях территориального планирования, выявлены их общность и различие с внедренной в Армении системой территориального планирования. В результате анализа представлены предложения в рамках повышения эффективности системы документации по территориальному планированию (программное градостроительство) Республики Армения.

OVERSEAS EXPERIENCE IN SPATIAL PLANNING

S.A. Tovmasyan
National University of Architecture and Construction of Armenia

Keywords: *spatial planning, level of planning, master plan, zoning*

The overseas experience in the sphere of spatial planning and the regulatory mechanisms of territorial development issues are presented. Comparative analysis has been conducted for the types of documents used abroad in different levels of spatial planning, as well as their similarities and differences compared with the spatial planning system of documents currently used in the Republic of Armenia. As a result of the analysis recommendations on the improvement of the efficiency of the spatial planning (urban planning) document system of the Republic of Armenia are offered.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Градостроительный кодекс Российской Федерации. 2004. N°190-Ф3/ /www.consultant.ru/popular/gskrf/15_1.html#p48/ 25.06.2015.
2. Земельный кодекс Российской Федерации. 2001. N°136-Ф3 /www.consultant.ru/popular/earth/25.06.2015.
3. Baugesetzbuch(BauGB)23.06.1960/http://www.gesetze-im-internet.de/bundesrecht

/bbaug/gesamt.pdf/15.04.2014.
4. Raumordnungsgesetz(ROG) 22.12.2008 /http://www.gesetze-im- rog_2008/gesamt.pdf/15.04.2014.
5. Territorial Agenda of the European Union 2020/http://www.eu2011.hu/files/bveu/ documents /TA2020.pdf/ 04.07.2015.
6. **Tovmasyan S.** On Possibilities of Application of German Spatial Planning Methodology in Armenia // ZFV.- 2015.- 1.- P.11-15.
7. **Magel H.** New Trends in European and German Spatial Planning and Development // Keynote speech to CLSPI/HSS/TUM Seminar, Yuzhou,P.R.China, Oktober 9, 2013 /www.bole.bgu.tum.de/fileadmin/ w00brh/www/ PDFs/News/China_KeyNote_2013.pdf. 10.03.2014.
8. **Уткин Э., Денисов А.** Госудаественное и региональное управление. Зарубежный опыт региональной политики/ http://exsolver.narod. ru/Books/Goveth/Utkin2/c3.html.20.02. 2009.
9. Schmidt S. and Buehler R. The Planning Process in the US and Germany: A Comparative Analisis/ https://ralphbu.files.wordpress.com/2011/09/lu_d_usa.pdf /10.08.2014.
10. **Теплицкая А.А.** Обзор и анализ зарубежного опыта планирования // Молодой ученый.- 2013.-Nº1.- С. 188-192.

Ներկայացվել է՝ 07.11.2017 թ.
Ընդունվել է տպագրության՝ 14.12.2017 թ.